ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ XXXIII ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

(Նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանի 85-ամյակին)

2012 թ. սեպտեմբերի 22-ին 85-րդ տարին բոլորեց ժամանակակից նշանավոր պատմաբան, գիտության հմուտ կազմակերպիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը: Հայտնի պատմաբանի գիտակազմակերպչական գործունեությունը կես դարից ավելի անխզելիորեն կապված է ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ: Լինելով ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենը՝ նրա նախաձեռնությամբ ու գործուն մասնակցությամբ 1960-ական թվականներին կազմակերպվեց ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների անդրանիկ նստաշրջանը, որն այնուհետև վերածվեց ավանդույթի: Օրինաչափ է, որ 2012 թ. հոկտեմբերի 6–7-ը Կոտայքի մարզի Արզական գյուղում գտնվող ԳԱԱ գիտաժողովների տանը տեղի ունեցած Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների հերթական՝ XXXIII գիտական նստաշրջանը նվիրված էր ակադ. Վ. Բ. Բարխուդարյանի ծննդյան 85-ամյակին:

Հոկտեմբերի 6-ին բացելով գիտական նստաշրջանը՝ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Խաչատրյանը *ողջունեց ներկաներին և ինստիտուտի աշխատակիցների անունից շնորհավորեց Վ. Բարխուդարյանին:*

Այնուհետև Վ. Բարխուդարյանի կյանքին և գիտական գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ Պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը՝ *մանրամասն անդրադառնալով անվանի պատմաբանի անցած ուսանելի կյանքի ուղուն և նրա գիտական վաստակին:*

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը *հատուկ անդրադարձ կատարեց Վ. Բարխուդարյանի գիտակազմակերպչական գործունեությանը՝ նշելով, որ հոբելյարը վաստակել է գործընկերների սերն ու հարգանքը՝ հայրենանվեր գիտնականի և ազնիվ քաղաքացու հրաշալի օրինակ հանդիսանալով երիտասարդների համար:*

Իրենց ելույթներում հոբելյարին բարեմաղթանքներ հղեցին Պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Դանիելյանը, *Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ* Ալբերտ Խառատյանը, *պատմական գիտությունների դոկտոր* Էմմա Կոստանդյանը, *Վ. Բարխուդարյանի նախկին ասպիրանտ, պատմական գի-*

տությունների թեկնածու Հովհաննես Ալեքսանյանը *և ուրիշներ: Նրանք վերհիշեցին հոբելյարի հետ համատեղ աշխատանքի ընթացքում տեղի ունեցած ուշագրավ իրադարձություններ, պատմեցին երիտասարդների համար ուսանելի բազմաթիվ դեպքերի մասին:*

Իր ելույթում Վ. Բարխուդարյանը *շնորհակալական ջերմ խոսքեր ուղղեց ԳԱԱ նախագահությանը, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքին և Պատմության ինստիտուտի տնօրինությանը՝ երախտագիտություն հայտնելով իր ծննդյան հոբելյանին նվիրված երիտասարդ գիտաշխատողների նստաշրջան կազմակերպելու համար: Այնուհետև նա բարեմաղթանքներ ուղղեց երիտասարդ պատմաբաններին և հուշեր պատմեց Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների առաջին նստաշրջանի վերաբերյալ:*

Կ. Խաչատրյանի նախագահությամբ տեղի ունեցած գիտական նստաշրջանի առաջին նիստում ընթերցվեց երեք զեկուցում: Պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի աշխատակից Ալիսա Դումիկյանը *զեկուցեց «Հայաստանին տրված «Սոմխիթ» անվանման հարցի շուրջ (XIX դ. ֆրանսիական հայագիտության լույսի ներքո)» թեմայով՝ փաստելով, որ ժամանակի ընթացքում Սոմխիթ (Սոմխեթ)-ին տարբեր «էթնո-քաղաքական» իմաստներ տալով՝ վրաց պատմագիտության մեջ հարցը քաղաքականացվել է՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի հյուսիսարևելյան տարածքի պատմությունը «վրացականացնելու» նպատակով: Այս համատեքստում հատկանշական է, որ դեռևս XIX դարում ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը (1791–1832) ուշադրություն էր դարձրել օտար զավթումների հետևանքով հայկական պատմաաշխարհագրական հասկացությունների աղավաղման վրա: Զեկուցողը նշեց, որ Սոմխիթ/Սոմխեթ տեղանվան երկու տարբերակների դեպքում էլ խոսքը Վիրքից հարավ ընկած հայկական տարածքների մասին է՝ թե՛ ամբողջ Հայաստանի և թե՛ նրա հյուսիսային Գուգարք աշխարհի համապատասխան գավառների առումով: Պատմության ինստիտուտի հայցորդ* Հրաչյա Փանոսյանի *զեկուցումը նվիրված էր Նախիջևանի վարչաքաղաքական դրությանը՝ հնագույն ժամանակներից մինչև XV դարը: Զեկուցման մեջ ի մի էր բերվել հունահռոմեական պատմիչների և հայ մատենագիրների հաղորդած տեղեկությունները Նախիջևանի մասին, անդրադարձ կատարվել նաև երկրամասի ժողովրդագրական խնդիրներին: Մատենադարանի գիտաշխատող* Արմինե Մելքոնյանի՝ *«Դավիթ Անհաղթին երկերի վերագրման հարցի շուրջ» զեկուցման մեջ անդրադարձ էր կատարվում միջնադարյան հայ մատենագրության ամենահետաքրքրական կերպարներից մեկին՝ Դավիթ Անհաղթին, սակայն ոչ թե ժամանակակից գիտական մոտեցման, այլ միջնադարյան ընկալման տեսանկյունից՝ հիմնականում քննելով տարբեր երկերի՝ նրան վերագրման սկզբունքները և հնարավոր պատճառները: Կարևորելով այն հանգամանքը, որ Դավիթ Անհաղթը սրբադասվել է Հայ եկեղեցու կողմից՝ հիմնավորվում էր, որ միջնադարում նրան որոշ երկերի վերագրումն ունեցել է որոշակի նպատակ և սկզբունքային նշանակություն:*

Գիտական նստաշրջանի երկրորդ նիստը վարում էր ինստիտուտի գիտքարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հակոբ

Մուրադյանը: Ելույթ ունեցավ ինստիտուտի Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ, պատմական գիտությունների թեկնածու Արտակ Մաղալյանը, *որը ներկայացրեց զեկուցում «Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամե» աշխատությունը» թեմայով: Նա, մասնավորապես, կարևորեց Ադիգյոզալ-բեկի այն հաղորդումը, ըստ որի՝ Նադիր շահը Արցախի մելիքներին հանում է Գանձակի Զիադողլի խաների ենթակայությունից և վերցնում իր անմիջական ենթակայության տակ: Փաստորեն, դրանով մահմեդական պատմագիրը վկայում է Նադիր շահի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության՝ Խամսայի մելիքությունների կազմավորման մասին: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց նաև Միրզա Ադիգյոզալ-բեկի հաղորդած տեղեկություններն Արցախի մելիքությունների վերաբերյալ: Ինստիտուտի հայցորդ* Լիլիթ Քոսյանը *ներկայացրեց զեկուցում «1890-ական թթ. հայկական կոտորածների արձագանքները «Մուրճ» պարբերականում» թեմայով: Զեկույցում խոսվում էր Սասունի կոտորածի, Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում թուրքերի իրականացրած վայրագությունների և եվրոպական երկրների արձագանքի մասին: Զեկուցողը, ըստ «Մուրճ» պարբերականի տեղեկությունների, ներկայացրեց Սասունի հայության ինքնապաշտպանական ուժերի թվաքանակը, ինչպես նաև տեղեկություններ Խարբերդի նահանգում և նրա 59 գյուղերում 1895 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1896 թ. հունվարի 15-ը տեղի ունեցած հայերի կոտորածների մասին: Ինստիտուտի հայցորդ* Նարինե Երանոսյանի *զեկուցման մեջ, որը վերնագրված էր «Հայկական բարենորոգումների լուսաբանումը եգիպտական «Ալ-Ահրամ» օրաթերթում 1894–1896 թթ.», ներկայացվում էր այդ օրաթերթի դիրքորոշումն արևմտահայության խնդիրների նկատմամբ, ինչը եգիպտական հասարակական մտքի մի որոշակի շերտի մոտեցումների հանրագումարն էր: Արևմտահայության խնդիրները պարբերականի էջերում արտացոլվում էին՝ անցնելով «Եգիպտական հարցի» կիզակետով՝ հստակ եզրագծելով Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության առանցքային շահերից մեկի ուրվագծերը: Զեկուցողը հատուկ ընդգծեց նաև պարբերականի՝ օսմանյան պաշտոնական լրատվությանը համահունչ լինելու փաստը:*

Գիտաժողովի երրորդ նիստը վարում էր ինստիտուտի ԵԳԽ նախագահ Արտակ Մաղալյանը: Ինստիտուտի ասպիրանտ Մյասնիկ Եսոյանի *զեկուցումը վերնագրված էր «Կիլիկիայի հայության 1909 թ. կոտորածների լուսաբանումը սիրիական «Թակկադում» թերթում»: Ելույթում ներկայացվեցին հայկական կոտորածների և կրած նյութական կորուստների վերաբերյալ այդ թերթի տեղեկությունները: Նա ցույց տվեց, որ սիրիական մամուլը ևս միանշանակ վկայում է կիլիկիահայության կոտորածների՝ պետական մակարդակով կազմակերպված լինելու մասին: Ինստիտուտի աշխատակից* Ռեգինա Գալուստյանը *ներկայացրեց զեկուցում «Հայոց ցեղասպանության ընթացքում հայ մտավորականության ոչնչացումն ըստ գերմանական և ավստրո-հունգարական հրատարակված փաստաթղթերի» թեմայով: Զեկուցման նպատակն էր ևս մեկ անգամ հիմնավորել Հայոց ցեղասպանության ընթացքում հայ մտավորականության ոչնչացման առանձին*

փուլ լինելը՝ ըստ Օսմանյան կայսրության դաշնակից պետությունների փաստաթղթերի: Զեկուցողը վերստին փաստեց այն իրողությունը, որ ցեղասպանությունն իրականացվել է պետական մակարդակով՝ նախապես կազմված ծրագրի համաձայն: Ինստիտուտի հայցորդ Արծրուն Հովհաննիսյանի *զեկուցումը նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերին և սպառազինությանը: Զեկուցման մեջ, մասնավորապես, նշվում էր բանակի սպառազինության տեսակների, որակի, դրանց նշանակության և այլ հարցերի մասին: Նա անդրադարձավ նաև անգլիացիների կողմից Հայաստանի Հանրապետությանը մատակարարված սպառազինությանը և այդ զենքի նշանակությանը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում: Ինստիտուտի հայցորդ* Գագիկ Ժամհարյանի *զեկուցումը նվիրված էր պատմագիտության օժանդակ ճյուղերից մեկի՝ առօրեականության բովանդակությանն ու խնդիրներին: Զեկուցողը ներկայացրեց առօրեականության՝ որպես պատմական ուսումնասիրությունների նոր ուղղության շուրջ եվրոպական և ռուսական պատմագիտության մեջ տարածված տեսակետները: Նա խոսեց նաև առօրեականության հիմնախնդրի գիտական ձևակերպման հարցի մասին և կարևորեց հայ պատմագիտության մեջ այդ խնդրին նվիրված սակավաթիվ հետազոտությունները:*

Գիտաժողովի եզրափակիչ՝ չորրորդ նիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 7-ին: Այն վարում էր ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Պատմական գիտությունների թեկնածու Համո Սուքիասյանը *«Հայկական ԽՍՀ Շահումյանի շրջանը 1939–1958 թթ.» վերտառությամբ զեկուցման մեջ անդրադարձավ Երևան քաղաքի զարգացման պատմությանը՝ ներկայացնելով Շահումյանի (նախկինում՝ Երևանի գյուղական, Բերիայի անվան) շրջանի համառոտ պատմությունը՝ շրջանի ստեղծումից մինչև Երևան քաղաքին միավորվելը: Նա փաստեց, որ եթե Երևանին մերձակա գյուղական բնակավայրերի միավորմամբ նոր շրջանի ստեղծումը հիմնավորվել է գյուղատնտեսական մթերքներով մայրաքաղաքն ապահովելու տեսանկյունից, ապա շրջանի՝ մայրաքաղաքին միավորելն առաջին հերթին պայմանավորված էր քաղաքի ընդլայնմամբ և արդյունաբերական ու բնակարանային շինարարության աճող պահանջներով: Զեկույցում հատուկ անդրադարձ կատարվեց շրջանի բնակչության առօրյային: Ինստիտուտի հայցորդ* Նարինե Հովսեփյանի *զեկուցումը նվիրված էր Հայրենական Մեծ պատերազմի սկզբնական շրջանում Խորհրդային Հայաստանի գյուղի առօրյային: Զեկուցողը, մասնավորապես, նշեց, որ եթե սկզբում բնակչության ոգևորությունը մեծ էր և զինակոչիկներին բանակ էին ճանապարհում դհոլ-զուռնայով ու հաղթանակի կոչերով, հետագայում, երբ զորակոչերը դարձան պարբերական և ռազմաճակատից ստացվեցին առաջին «սև թղթերը», բնակչության խանդավառությունը նվազեց: Ինստիտուտի հայցորդ* Տաթևիկ Մանուկյանի՝ *«Հայրենադարձների կեցությունն ու առօրյան Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան առաջին տարիներին» զեկույցում անդրադարձ կատարվեց խորհրդային պետական-կուսակցական մարմինների կողմից հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքներին,նրանց«գաղափարապես դաստիարակելու»,պետական տարբեր հիմնարկություններում ընդգրկելու քաղաքականությանը, ինչպես նաև*

հայրենիքում հայրենադարձների առջև ծառացած դժվարություններին, նրանց որոշ մասի սպասումները չարդարանալուն: Գիտաժողովը եզրափակվեց պատմական գիտությունների թեկնածու Հովհաննես Ալեքսանյանի *«Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում ըստ 1970 թ. համամիութենական մարդահամարի տվյալների» զեկուցումով, ուր ներկայացվեց ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող հայության թվաքանակի և տեղաբաշխման շարժընթացը, հայերենին և այլ լեզուների տիրապետելու, գրագիտության մակարդակը: Զեկուցողը համեմատություն անցկացրեց նաև ԽՍՀՄ նախորդ մարդահամարների տվյալների հետ:*

Աշխույժ քննարկումից և հարց ու պատասխանից հետո ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանն ամփոփեց գիտական նստաշրջանի արդյունքները: Գիտաժողովի ընթացքում ներկայացված լավագույն զեկուցումները հրատարակվելու են Պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի հերթական համարում:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ,
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ